

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ

Դարերից եկած ճակատագրիդ տա՛ռն եմ անանուն,
Ու Հայկյան նետիդ դարեդար թռչող ալա՛քը սուրսայր,
Տիգրան արքայիդ արյո՛ւնն է հոսում իմ երակներում,
Ու իմ հոգու մեջ բյուր Նարեկներիդ հայա՛ցքն է պայծառ։

Սրբություն սրբոց իմ անբիծ խորան՝ Հայաստա՛ն աշխարհ,
Դարերում ապրած բոլոր վերքերիդ ցա՛վն է իմ սրտում,
Քո արյամբ գրված մագաղաթներիդ շրշյո՛ւնը խոնարհ,
Պանդուխտին կանչող բյուր զանգակներիդ կա՛նչն է իմ սրտում։

Քո երազն եմ ես՝ կանգնած Արայիդ սուրբ լեռան լանջին,
Ու խորաններիդ առ Աստված ուղղված մրմո՛ւնջն եմ լուսե,
Պիտի սերմանվեմ քո հողում ինչպես հատի՛կն առաջին,
Ու պիտի ապրեմ գալիք օրերիդ անունո՛վ վսեմ։

ԳԵՎՈՐԳ ՍՐԿ. ՄԿՐՏՉՅԱՆ